

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հունիսի 27-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 70 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր քառասունչորս, աշխատանքի տեղավորման՝ քսանհինգ, բնակարանով ապահովելու մասին մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից քառասուներեքին տրվել է դրական լուծում, մեկը՝ գտնվում է ուսումնասիրման փուլում :

Աշխատանքի տեղավորման մասին դիմումներից քսաներեքը վերցվել են հաշվառման, երկու քաղաքացի ապահովվել են աշխատանքով:

Մարզպետ Վ. Հակոբյանի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ուսումնասիրման ընթացքի մեջ է գտնվում բնակարանով ապահովելու մասին դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ